

մարդու մագերը միայն չեն փշաքաղուում՝ բրիտանական քարոյական ամէն զգացում մտած պէտք է լինի մեր մէջ, եթէ շուտն զայրոյթով չբացականչենք՝ այդ արդէն չափազանց է, — եւ դառնապէս մտածենք. որտեղից է զալիս այդ պղտոր հոսանքը եւ ո՞ր է տանում:

Գրական ստապարիզի վերայ գտնուող ստահակները մի զօրեղ միջոց ունին, որով իրենց դէմ եղած կամ լինելիք բողոքները խեղդում են. իրեն ազատութիւն կներկայացնեն իրենց սանձարձակութիւնը եւ դիմացի մարդուն կեղծաւոր կանուանեն, եւ մենք այնչափ ճիշդութեամբ ու համազօրեց զարկ, որ կվախենանք այդ անուշից, կվախենանք ստահակների զոռում՝ գոչումից եւ թող կտանք, որ նորա պրոթիւնը ոտքի տակ տան եւ իրենց փուշ գաղափարներն անարգել տարածեն: Իսկ այդ գաղափարներով անուում է մի նոր սերունդ, որի համար, եթէ քանն այսպէս առաջ երթայ՝ ամօթի ու պատկառանքի տեղ չի լինի այլ եւս եւ մինչեւ այժմ՝ եղած սահմաններն էլ կվերանան: Այնպիսի մի հանգամանք է սա, որ ինչպէս եւ լինի անուշադիր թողնել կարելի չէ. մի օր աչք խփեցինք, միւս օր՝ առիպումս պէտք է լինիք այնուամենայնիւ ի վերջոյ կամայ ակամայ հոգս քաշել այս մասին. որչափ շուտ դեռ ծայրահեղութեան չհասած՝ այնչափ լաւ: — Մենք վրդովում ենք տեսնելով, որ հասարակ ժողովուրդը խօսքի ընտրութիւն անել չգիտէ՝ երեխաների, կանանց մօտ իսկ ինչ ստես խօսում է: Նոցա ակամայնորդ վարժեցնում՝ աղտեղի խօսքերի, հետեւաբար եւ սրտերը՝ աղտեղի զգացումների. ազատութեան արդիւնք ենք համարում՝ այդ եւ փափազով սպասում՝ այն օրին, երբ լուսաւորութիւն կտարածուի ամէն տեղ եւ կըթուփեան շնորհիւ կվերանան այդպիսի անտեղութիւնները: Որչափ աւելի վերադասեցուցիչ է ուրեմն տեսնել, որ լուսաւոր երազայի կենտրոնում՝ նստած մարդիկ՝ Վիտտիլիւս եւ զեդասիթիւս տարածելու, ժողովուրդ կըթելու նպատակով՝ ասիական կըրքերի աղտեղութեանց մէջ են թաթախում՝ իրենց զրեւ եւ ազէտ հայրենակիցներին այնպիսի դասեր տալիս, որոնց մօտ փողոցում

լուսմանը անմեղ քաներ են: Այն գիրք, որ մտքեր զարգացնելու եւ սրտեր ազնուացնելու միջոց պէտք է լինէր՝ մի քանի ստահակների շնորհիւ միայն պղտորելու եւ սիրտ ապականելու միջոց է դառնում: Ո՞վ պէտք է սանձէ այդ ստահակներին:

## ՄԱՅՐ ԱԹՈՌ.

Արարտաի անցեալ համարում յիշած էինք արդէն Նորին Սրբութիւն Վեհափառ Հայրապետի ուղեորութիւնը գէպի հասիւ:

Սուրբ Աստուածածնայ աօնին Նորին Վեհափառութիւնը հասիւցիւ Ալեքսանդրապոլ ուղարկեց պատարագելու եւ ժողովրդեան միութեանը իւր ուղեկից Գեր. Ներսէս Արքեպիսկոպոսին, զիւանապետ Բարձր. Նորին վարդապետի հետ: Իսկ Ն. Ս. Օծութիւնը տասն օրի չափ հասիւմում հանգչելուց յետոյ՝ երեքշաբթի օգոստ. 17-ին մեկնեցաւ հասիւցիւ, եւ նոյն օրը Բաշ-Արարանում գիշերելով 18-ին բարեհաճեց այցելել Սաղմոսափառքը, զիտելու համար իւր նախաձեռնութեամբ եղած նորոգութիւնները, նոյն գիշերը Սաղմոսափառքում անցնելուց յետոյ, Ն. Վեհափառութիւնը ամօրս 19-ին ողջ առողջ ժամանեց ի Մայր Աթոռ:

Ս. Հայրապետը օգոստ. 31-ին կրկին մի անգամ ուղեորութիւն յանձն առաւ գէպի Բիւրական ամարանոց, ուր չորս օր մնաց եւ սկստ. 4-ին վերադարձաւ ի ս. Եջմիածին:

Ուսուցչապետ պ. Մառ՝ իւր աշխատութիւնը վերջացնելով օգոստ. 17-ին մեկնեցաւ Մայր Աթոռից, Արաւշար գիւղի բլուրի վերայ պեղումներ անելու նպատակով: Այդտեղ 5 օր մնալուց յետոյ օգոստ. 22-ի կիրակի օրը վերադարձաւ Երեւանի վերայով գէպի իւր պաշտօնատեղին:

Յարգելի ուսուցչապետ իւր երեւան հանած արդիւնքների մասին ընդարձակօրէն տեղեկութիւն պէտք է տայ Պետերբուրգի հնա-

դիտական ընկերութեան յիշատակարաններին մէջ:

Կարսի փոխանորդ Արժ. Եղիշէ վարդ. Մուրադեան ու թմանայ բացակայութիւնից յետոյ Ս. Պետրբուրգում Մայր Աթոռ եկաւ և իւր զործերի հաշիւը Նորին Վեհափառութեան ներկայացնելուց յետոյ մեկնեցաւ իւր պաշտօնատեղին՝ Կարս:

Արժ. Կոմիտաս վարդապետ Գեորգեան՝ որ երեք տարուց ի վեր Գերմանիայում ուսումնասիրում էր երաժշտութեան արուեստը, վերադարձաւ Մայր Աթոռ և ստանձնեց Գեորգեան ժեմարանի երաժշտութեան ուսուցչի պաշտօնը:

Վեհ. Հայրապետի հրամանաւ ս. Էջմիածնայ վանքի հիւրընկալ Արժ. Խաչակ վարդ. Տ. Միքայէլեան Դորու յաջորդ նշանակուեցաւ:

Ս. Էջմիածնայ միարաններից Արժ. Բենիկ վարդապետ կարդուեցաւ տեսուչ Երեանի թեմական զպրանոցին:

Երեանի թեմի Առաջ. Փոխանորդ Դեր. Ներսէս Արքեպիսկոպոսի համար՝ որ առաջարկուած էր Բեսարաբիոյ թեմի առաջնորդ, ստացուեցաւ Կայսերական հաստատութեան վաւերացիրը Ն. Բ. Սրբազնութիւն պատրաստուում է մեկնել դէպի իւր նոր պաշտօնատեղին:

Տպարանական Ժողովի անդամ Շնորհ. Ղազար սարկաւազ Նորին Վեհափառութեան կողմից թոյլտուութիւն ստանալով՝ պր. Մանթաշեանի բարերարութեամբ Դորպատ գնաց՝ համալսարանում ուսանելու համար: Նրա տեղ Տպարանական Ժողովի անդամ կարգուեցաւ այս տարուայ ժեմարանաւարներից Շնորհ. Գրիգոր սարկաւազ:



ՃԵՄԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ.

Գեորգեան ժեմարան մտնել ցանկացող

աշակերանների, ինչպէս և անցեալ տարուանից վերաքննելի աշակերանների քննութիւնները սկսան սեպտ. 1-ից և տեւեցին մինչև սեպտ. 5: Այս տարուայ նոր ընդունուած աշակերանների թիւն է աւելի քան քառասուն: Դասերն սկսան սեպտ. 7, երեքշաբթի օրը:

Այս տարի ժեմարան հրաւիրուած նոր ուսուցիչներն են. Արժ. Կոմիտաս վարդապետ Գեորգեան՝ որ նոր է վերադարձել Գերմանիայից և աւանդելու է եկեղեցական երաժշտութիւն. — Պետրբուրգի համալսարանի իրաւարանական բաժնի նորաւարտ Կանդիատս պր. Միրական Տիգրանեան՝ որ աւանդելու է եկեղեցական իրաւագիտութիւն. պր. Յովհաննէս Բախչեան՝ որ պէտք է աւանդէ Ռուսաց լեզու: Երեք յարգելի ուսուցիչներն արդէն սկսել են իրենց դասերը:

Պաշտօնի են հրաւիրուած նաև անցեալ տարուայ ժեմարանաւարներից՝ Զերորէ Միրաքեան, իրրե վերակացու և այս տարուայ աւարտողներից՝ Յակոբ Արխատակիսեան, իրրե ուսուցիչ ստորին դասարաններում:

Ժեմարանի Տեսուչ և Արարատի խմբագիր Տ. Կարապետ վարդապետ ընտանեկան պատճառներով երկու շաբաթուայ համար արձակուրդ ստացած լինելով հայրենիք գնալու օգոստ. 28-ին վերադարձաւ և անմիջապէս զբաղուել սկսաւ նորեկների ընդունելու թեանց քննութիւններով:

Տ Ա Ճ Կ Ա Հ Ա Յ Ք.



Տ. ԳՐԻԳՈՐԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԼԵԱԹՃԵԱՆ

Տ. Գրիգորիս եպիսկոպոս Ալեաթճեան, որ բաւական ժամանակէ ի վեր տառագում էլ տուղի կազմեցումս կոչուած ծանր հիւանդու-